ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 126

ք. Արտաշատ

«26» 08 2016թ.

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի 2016 թվականի տարեկան ծրագրով.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Դիմիտրովի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2016 թվականի օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբերի 2-ը ներառյալ՝ 5 աշխատանքային օր, իրականացնել ներքին աուդիտ:
2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Դիմիտրովի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2013, 2014 և 2015 թվականների ընթացքում իրականացրած ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախատեսված և կատարված փաստացի ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:
3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նելլի Սիմոնյանին՝ կատարել գործուղման ծախսերի վճարում:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 125

ք. Արտաշատ

«26» 08 2016թ.

ՍՈՒՐԵՆ ՔԱՐԱՄՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ, 161-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Սուրեն Քարամյանին տրամադրել 2016 թվականի ամենամյա արձակուրդը՝ 2016 թվականի սեպտեմբերի 1-ից հոկտեմբերի 5-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն. Սիմոնյանին՝ հատկացնել միանվագ արձակուրդային վճար՝ միջին ամսական աշխատավարձի չափով:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 124

ք. Արտաշատ

«24» 08 2016թ.

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ին թիվ ՆՀ 728 հրամանագրի 1.17 կետի ա/ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2016 թվականի հունիսի 23-ի թիվ 1933 հրամանի հիման վրա «Մասիս բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացրած դիտարկման արդյունքների վերաբերյալ եզրակացությունը՝

«Մասիս բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ալեքսանդր Ղուկասյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 123

<<24>> << 08>> 2016թ. ք. Արտաշատ

ԼԵՅԼԻ ԳԵՂԱՄԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով.

1. <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեստանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լեյլի Գեղամի Մանուկյանին 2016 թվականի օգոստոսի 25-ից ազատել զբաղեցրած պաշտոնից և լուծել նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. Լեյլի Գեղամի Մանուկյանին թողնել նույն դպրոցում տնօրենի պաշտոնակատար, մինչև սահմանված կարգով տնօրենի նշանակվելը:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 122

<<23>> << 08>> 2016թ. ք. Արտաշատ

ՄԵԼՍԻԿ ՍԵՐԳԵՅԻ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով.

1. <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մելսիկ Սերգեյի Ղարիբյանին 2016 թվականի օգոստոսի 23-ից ազատել զբաղեցրած պաշտոնից և լուծել նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. Մելսիկ Սերգեյի Ղարիբյանին թողնել նույն դպրոցում տնօրենի պաշտոնակատար, մինչև սահմանված կարգով տնօրենի նշանակվելը:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 121

<<23>> << 08>> 2016թ. ք. Արտաշատ

ԳՈՀԱՐԻԿ ՌԱԶՄԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով.

1. <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ քաղաքի N3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոհարիկ Ռազմիկի Հովհաննիսյանին 2016 թվականի օգոստոսի 23-ից ազատել զբաղեցրած պաշտոնից և լուծել նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. Գոհարիկ Ռազմիկի Հովհաննիսյանին թողնել նույն դպրոցում տնօրենի պաշտոնակատար, մինչև սահմանված կարգով տնօրենի նշանակվելը:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 120

<<22>> << 08>> 2016թ. գ. Արտաշատ

ԱՅԳԵՊԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետի, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ 728-Ն հրամանագրի 1.16 կետի պահանջներով.

2016 թվականի օգոստոսի 22-ից Գոհար Ավագի Խաչատրյանին նշանակել <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգեպատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով տնօրենի նշանակումը:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ